


(Ներածութիւն. տես յէջ 285)



Մեր մինչեւ հիմայ բրած նկատողութեամբ՝ կը տեսնեմք, որ անմիջապէս՝ խորենացող Հայոց Պատմութեան առաջին հրատարակութեան հետ՝ միանգամայն կը սկսի նաև անոր քննադատութիւնն։ Յետ լա-կրոսի՝ ամբողջ դար մի ժամանակ՝ այդ քննադատութիւնն կը կայանար գրեթէ առանձնաբար յուսումնասիրութեան խորենացողն գլխաւոր աղբերակ՝ ասորի Մար-Աբաս Կատիկանի, որ էր արքունի պատմագիր՝ առաջին հայ արշակունւոյն՝ վաղարշակայ, Գրիստոսի թուականէն երկու դար առաջ։ Այս հմուտ ասորոյն կ'ընծայէ խորենացին զբաղեցական գիրքն, զոր գառն է սա, ըստ հրամանի պարսիկ արշակունւոյն՝ մեծին Արշակայ, եղբոր վաղարշակայ, Նիւնուէի գիւանին մէջ, ճիշդ մի և կէս դար յառաջ Գրիստոսի թուականէն։ Այդ գիրքն թարգմանուած էր ի յոյն լեզու, հրամանաւ Աղեքսանդրի Մակեդոնացոյն, և կը բովանդակէր յինքեան Հայոց ամենահին պատմութիւնը կանոնաւոր կարգադրութեամբ, գրեթէ անընդհատ, սկսեալ աշտարակալիւթեանէն ճիշդ մինչեւ Գրիստոսէ երկու դար յառաջ։

Մար-Աբասայ նկատմամբ նախկին տեսութիւն մի՝ թէ և վերիվերոյ՝ բրած է անցեալ դարու գիտնական գաղղիացին Փրերէտ։ Իրեն կարծեօք, Մար-Աբաս, որ կը գրէր Գրիստոսէ իբր դար մ'առաջ, կարող էր ճշմարիտ վկայ լինել իւր ժամանակին մօտ գի-

տաց համար. բայց այլ ամէն բան՝ զորս կ'աւանդէր հնազոյն պատմութեան նկատմամբ, խառնաշփոթ ժողովածոյ մ'էր պատմական առասպելաց (Un ramas indigeste des fables historiques), որ յաճախեալ էին հերթայեցի և ասորի հեղինակութեան մօտ, որք կ'ուզէին համաձայնեցընել կամ միարանել քաղեցական, ասորական և յունական առասպելեալ աւանդութիւնը (fiction)։ Մովսէս մարգարէին պատմութեան հետ։ Փրերէտ միանգամայն ևս զարմանք կը յայտնէ Մար-Աբասայ անփութութեան վրայ, որ չէր գիտէր, թէ յայն ժամանակ երբ նա զՆիւնուէ կը յիշէ, արդէն իսկ աւելի քան 500 ամաց հետէ՝ այդ քաղաքն զոյոթիւն չունէր։

Միւս փրանկ գիտնականն Կատրըմէր, 1850 ամին, կը հաստատէր իւր նախորդին բրած դիտողութիւնը, և իւր կողմանէ տալակոյս կը յայտնէր նոյն իսկ « Մար-Աբաս Կատիկայ » անունն արժանահաւատութեան վրայ։ Այդ անունն, կ'ըսէր, Ասորոց մօտ՝ միայն քրիստոնէութեան ժամանակ կարէր

4. Freret, Mémoire sur l'Ère arménienne, Oeuvres complètes, 4^e ed. ԺԲ. յէջ 187-254. — Mémoires de l'Acad. des Inscriptions et Belles-Lettres, 4^e ed. ԽԵ. յէջ 96 և այլն։ — Նոյնպէս « Վառայ արժանագրութեան և անոնց նշանակութիւն ի պատմ. առաջաւոր Ասիոյ » Գ. Պատկանեանի, ի Թերթի պաշտօնէի ժողովրդական լուսաւորութեան, յամս 1874 — 1881, 4^e ed. և անանկին տետրիւ հրատարակեցաւ՝ 1881, Պետրբուրգ, յէջ 48։

յերեւան զալ, երբ կրօնական անձանց յատուկ անուան առջեւ կը յաւելուին Մար, այսինքն, տէր, հայր: — Կարելի է միտաբերել, կ'ըսէ կատարմէր, որ բոլոր այդ պատմութիւնն հիմնուած լինի այն խաղաբարութեան (mistification) վրայ, թէ Աղեքսանդրի Մակեդոնացոյն հրամանաւ ի յոյն լեզու թարգմանուած հռչակաւոր փաղղէական գիրքն, կարելի է թէ, օրինակ մ'էր թեւոտոսի պատմութեան: Գուցէ աստի ասորի քրիստոնէայ մի քաղուածոյ մի յօրինէր է, և ուզելով իւր երկասիրութեան յարգը աւելցնել, յարմարագրեր է՝ թէ այնու մինչեւ անգամ Աղեքսանդր Մակեդոնացին հետաքրքրուած լինի: Այդ առասպելն շողմելով աւրեւելցոց անապարծութիւնը, մեծ հիացմամբ ընդունէր է զայն խորհնացին, և ըստ նորա օրինակին՝ Հայոց ամենայն պատմագիրք¹:

Այս հարցը շօշափած է հարեւանցի կերպով նա և Ռենան, որ և նա Մար—Աբաս անունը, ըստ կատարմէրի, քրիստոնէական կը համարի, իսկ փաղղէական գրոցն գիտին հանգամանքը՝ բողոքովին առասպելական: Իսկ զաւրով բուն գրքին, որ՝ ըստ խորհնացոյն՝ հայկական տարեգիրք կը բովանդակէր, Ռենան զայն կը համարէր յետաթուական՝ կամ թէ ըսել՝ աւելի հին գրութիւն մը, շարաւորուած Եղեանիս զարոցին վերաբերող ասորիէ մի: Երով այդ գրքին այն մասն, որ կը խօսէր՝ քրիստոնէութենէ (անմիջապէս) առաջ եղած կամ քրիստոսի ժամանակակից իրաց վրայ, իրեն կարծեօք՝ յայտնապէս առասպելական գրոշմ կը կրէր իւր վրայ²: Ուրիշ տեղ փրանկ սեմազէտն կ'ըսէ, որ թէպէտ խորհնացին մեծ հաւատարմ կը վերաբերուէր զէպի Ի փաղղէական գիրքն, սակայն ինքն պատուաւոր և ճշմարտասաց անձն մ'էր:

Գրեթէ նոյն գաղափարով կը գրէր նա և

հանգուցեալ դասախօսն Պատկանեան իւր յօդուածոց մէջ յաղագս « Արձանագրութեանց վտնայ », յամս 1874—1881: Նորա կարծիք այս հետեւեալ եզրակացութեանց կը յանգէին.

ա. Կարծեցեալ փաղղէական գիրքն, թարգմանուած հրամանաւ Աղեքսանդրի, յայտնապէս Մար—Աբասայ գիտ է և միայն նորա երեւակայութեան մէջ գոյութիւն ունէր:

բ. Ինքն Մար—Աբաս կ'ապրէր, ինչպէս արդէն զայս չափով մը իւր անուան ցուցանէ, քրիստոնէական թուականի մէջ, — եթէ միայն այդ անունն հնարուած չէ անանուն հեղինակէ մի, — և ոչ իւրի կանուխ քան զԳ—Դ^{III} դար յետ ֆրիստոսի, այս ինքն է, ոչ աւելի քան 100 տարի առաջ քան զխորհնացի:

գ. Մար—Աբաս՝ գրելով Ասորոց և Մարաց վրայ՝ ի նոյն աղբերաց օգտուած է, յորոց և Եւսեբիոս, և որ աւելի ստոյգն է՝ նոյն իսկ Եւսեբիոսէ: Իսկ Հայոց պատմութիւնը շարագրելու համար՝ նա օգտուած է հայ և ասորի աւանդութիւններով, ձուլելով զանոնք ի մի ամբողջութիւն, նման կտեսիւսայ Ասորոց պատմութեան: (Արձանագրութիւնք վանայ, յէջ 65):

Փերովթէ Պետրոսի որդի Պատկանեան, համաձայն միւս քննադատից, նոյնպէս յանցաւոր կը գտնէր զխորհնացին, նախ իրեն զիւրահաւատութեան մէջ զէպի իւր աղբերքը, և երկրորդ՝ պատմական քննադատութենէն զուրկ լինելուն: Այլ նորա կողմանէ ոչ մի կեղծիք չէր տեսներ:

Այդ ժամանակաց մէջ Մար—Աբասայ վրայ կը գրէր նա և ծանօթ գերմանացի քննադատն Ալֆրեդ Վոն Գուտշմիդ¹: Մա

1. Quatremère, Observations sur la ville de Ninive, troisième article, Ի Journal des Savants, 1850, յէջ 364—368: Նոտապէս, Langlois, Coll., 1, յէջ 7. — ՊԱՏԿԱՆԵԱՆ, վտնայ արձանագրութիւնք, յէջ 48:

2. Renan, Histoire générale des langues sémitiques, Paris, 1858, յէջ 262—263.

1. Alfred Von-Gutschmid, Ueber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren, ապեալ Ի Berichte der Königlich-sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig, Philologisch-historische Classe. XXIII Bd., 1876, յէջ 1—45: Այս յօդուածս վերստին աղագրուած է Փր. Ռիւլի ձեռքով յետ մահուան Գուտշմիդի անոր փոքր Մատենագրութեանց (Kleine Schriften, 1892, Leipzig), երրորդ հատրին մէջ, յէջ 382—331:

տարբերելով նախընթաց քննադատներէն, որք՝
 խորենացոյն հնագոյն պատմութեան մէջ
 տեսնուած անհամաձայնութիւնքը՝ այդ ասոր-
 ւոյն կը վերագրէին, առաջին անգամ լուրջ
 տարակոյս յայտնեց նոյն իսկ խորենացոյ
 ճշմարտապատմով լինելուն մասին, և սկսաւ
 ապացուցանել՝ թէ շատ բան հայ պատմա-
 գիրն իւր շարագրութեան մէջ մտադիր փո-
 փոխած է։ Գուռլիդի միւս խօսքերն սակա-
 ւօք կը տարբերին Պատկանեանի ըսածնե-
 րէն, օրինակի համար, թէ խորենացին յիւր
 ձեռքն ունէր Մար—Աբաս Մծուրնցի՝ ըսուած
 ասորոյն մի փոքր անհաւատի գրութիւն մի,
 Գրեք պարտ յետ ֆրիստոսի, և թէ ապա
 զայն ամբողջացոյց նորանոր դիպաց յաւե-
 լուածով, և այնպէս ստեղծեց, ֆրիստոսէ
 իբր 130 տարի առաջ՝ վաղարշակ թագա-
 ւորին ժամանակ ապրող՝ Մար—Աբաս կա-
 տինայի պատմութիւնը։

Այս խնդրոյս մէջ աւելի առաջ գնաց հան-
 դուցեալ հայագէտն Մկրտիչ Յովսէփայ որդի
 Էմին, իւր հայկական վէպին վրայ կատարած
 հետազոտութեանց մէջ, զոր զրեց Տփղիսու
 հինգերորդ հնագիտական ժողովին առթիւ,
 յամի 1884։ Նա ուղղակի ժխտեց Մար—
 Աբասոյ և անոր ֆաղդէական գրոյն գոյու-
 թեան հնարաւորութիւնը¹, իսկ իրեւ աղ-

բիւր Հայոց հնագոյն պատմութեան՝ կը գնէր
 մի միայն հայկական վէպը և ժողովորդա-
 կան պատմութիւնը, յորոց ըստ իւր կարծեաց
 ընդարձակօրէն կ'օգտուէր խորենացին։

Հետազոտութեանց աւելի մանրամասնու-
 թեամբ և յառաջ բերած եզրակացութեանց
 վճռականութեամբ՝ ընտրի կ'ընծայուի Կոս-
 տանդինայոյսեցի գիտնականն Գարազաշեա-
 նի²։ Նոյն նիւթին վրայ ըրած երկասիրու-
 թիւնն, որ Մկր. Էմինի « հայկական վէ-
 պին » հետ գրեթէ համաժամանակ յերեւան
 եկաւ, յամի 1880։ Նա փութալան տար
 բալառութեան մի երկրորդ խորենացոյ
 պատմութեան ամբողջ Ա գիրքն և Բ գիրքն
 ալ ինն զուեմները, — այսինքն է, բոլոր այն
 մասն՝ որ ըստ բանից հայ պատմագրին՝ փոխ
 առնուած էր Մար—Աբասոյ ֆաղդէական
 զրքէն, և ապա տրամաբանելով յառաջ կը
 բերէր իւր եզրակացութիւնը հետեւեալ բա-
 ցատրութեամբ. — Մար—Աբասոյ պատմու-
 թիւնն՝ ոչ առասպել և ոչ ալ ժողովրդական
 վէպ է, այլ յոյն մատենագրաց (Հերոդոտոսի,
 Կտեսիասոյ, Քսենոփոնի, և այլոց) Պարսից
 և Ասորեստանցոց վրայ աւանդած պատմու-
 թիւնը, մեծաւ մասամբ առնուած Էւսեբիոսի
 ժամանակագրութենէ և փոխաբերուած ի Հայոս,
 անհաւատայի, մերթ եւս անճիշտ և բուն
 պատմութեան հակասող լրացուցիչ հանգա-
 մանօք կամ մանրամասնութեամբք։ Թէ
 Մար—Աբաս՝ լոկ կեղծիք մ'է։

Բայց միանգամայն Գարազաշեան չէր
 մխտը ժողովրդական վէպին ազդեցութիւնը
 Հայոց հնագոյն պատմութեան յօրինուածոյն
 վրայ։

Ի լրութիւն մեր ակնարկին՝ զոր կու տամք
 Մար—Աբասոյ նկատմամբ կատարուած քննա-
 դատական գրականութեան վրայ, պէտք է
 յիշել հօտ նաև ի 1894 ամին հրատարա-
 կուած դասագիտութեան Ա. Կարրիերի տետրակ
 մի³, — յորում՝ հիմնուելով քանի մի բաղ-

1. Ահա Գուռլիդի խօսքերն. « Um es kurz zu
 sagen, ich sehe in dem Auszuge des Ungeannan-
 ten beim Sebäos (Mar Abbas von Medsurch) den
 ersten Entwurf des Moses von Khoren, den er
 dann zur Geschichte von Armenien ausgearbei-
 tet und in seiner Weise verbessert hat, theils
 wirklich frühere Versehen berichtigend, theils die
 dort noch schüchtern und vereinzelt auftretenden
 Erdichtungen zu einem grossartigen die Tradi-
 tion seines Geschichtsstoffs betreffenden Lüg-
 engewebe ausspinnend ». (*Ueber d. Glaubenwür-
 digkeit, և այլն, յէջ 58*).

2. Մ. Էմին ի յառաջաբանի Ա հրատարակութեան
 իւր Թարգմանած Մ. խորենացոյ Հայոց Պատմու-
 թեան (Մոսկվա, 1858), զորտօր կերպով կը պաշա-
 պանէր զՄար—Աբաս, յառաջ բերելով շար մը ասոր-
 կութեանց՝ ընդդէմ եզրակացութեանց կատարմանի.
 ասկայն նոյն պատմութեան նոր Թարգմանութեան մէջ,
 որ հրատարակուեցաւ 1893 տարւոյն, գիտնական Թարգ-
 մանիչն իսպառ յապատեւ է այն էջերը, որ նուիրուած
 էին առաջին հրատարակութեան մէջ Մար—Աբասոյ
 պաշտօնականութեան։

1. Քննադատական Պատմ. Հայոց, Մասն Ա, Կին
 շրջան, Կ. Պոլիս, 1880 (հայերէն լեզուաւ). ուր Մար—
 Աբաս կատարայի քննադատութեան նուիրուած է գլ.
 Ծ. Կէշ. 127—206։

2. « Moïse de Khorène et les Généalogies pa-
 triarcales », Paris.

դատութեանց վրայ՝ կ'ապացուցուի Մար—Աբասայ խորենացույ հետ նոյնութիւնն ։

Վերոյիշեալ քննադատը, մինչդեռ ոմն այս և ոմն այն կերպով կը հերքեն խորենացույ գլխաւոր աղբիւրը՝ զՄար—Աբաս, սակայն տակաւին ոչ որ տարակոյս կը յայտնէ նըկատմամբ ժամանակին՝ յորում կ'ապրէր Հայ պատմադիրն . որով սա այլ դեռ եւս կը շարունակէ վայելել Ե՞րբ դարու գրիչ լինելուն համարումը ։

Այդ մինչդեռ մեր տեսած առաջնակարգ գիտնականաց գունդն համաշունչ յառաջ կը խաղար ընդդէմ Մար—Աբասայ, նոր լոյս մի փոխելով խորենացույ Պատմութեան վրայ, բացակայ կը մնային միայն վերնետկոյ Մխիթարեանը¹, որք նա և յետ պայծառ հետապնդութեանց Գուտշմիդի և Գարագաշեանի, տակաւին կարելի կը համարէին, առանց սակայն հերքելու ասոնց եզրակացութիւնը, դառնալ դարձեալ առ հնութիւնն և ըստ առաջնոյն ընդունել զՄար—Աբաս և անոր Բագդէական գիրքը, որպէս թէ այս հարիւրամեայ բանակութիւնը բնաւ եղած չլինէին ։

Բայց միանգամայն անարդար պիտի լինէր յետստովանել այդ գիտնական Միաբա-

1. Հմտ. օրինակի համար, Հ. Զարեանի « Պատմութիւն Հայոց », 3 տ., Վենետիկ, 1784 ։ 2. Խմբիւնի « Հնախոսութիւն Հայաստանի », 3 տ., Վենետիկ, 1855 ։ 3. Ալիւնի բազմաթիւ հետազոտութիւն, որ հրատարակուած են ի միջոցի եւրոպ. 1850-1890 թ. Ռուս-Վերն տնտեսութիւն, այլ և ուրիշ առանձին գրութիւնք ։ 4. Զարեան-Վարդի « Պատմութիւն հայկական մատենագրութեան », Մասն Ա, առաջին հրատարակութիւն 1865, երկրորդը՝ 1886 ։ 5. Մարգրիտի 1881-1883 տարեաց Բագդադէական մէջ հրատարակած յօդուածները, և այլն ։ — Իսկ Վենետիկ Մխիթարեանը մինչև վերջին ժամանակներս չէին զբաղեր Հայոց քննադատական պատմութեան մշակութեամբ և ոչ ալ առհասարակ նոյ պատմական յիշատակարանաց հրատարակութեամբ, ի բաց առեալ Հ. Յովսէփ Գալիւնի, որ շուրջած է Հայոց հին պատմութիւնը իւր հրատարակած գլխաւոր գործոց երկստիւթեան մէջ — « Տիեզերական պատմութիւն » (Վ իննա, 1849-1852), որ զգրագրաբար միայն մինչև Փրիստոսի հինգերորդ դար հասցուած է ։ Այլ և այնպէս նորա կարծիքն եւս Մար—Աբասայ մասին, քիչ կամ ոչ ինչ կը տարբերի Վենետիկ Մխիթարեանց յայտնածէն ։ Տես նորա « Տիեզերական պատմութիւն » ևս. Ա, յէջ 87 և յաջորդք ։

նութեան մեծամեծ ծառայութիւնը, զոր մատուցած են, բաց յայլոց, նա և հայկական պատմութեան ուսումնասիրութեան՝ բազմաթիւ հրատարակութեամբք Մովսիսի « Պատմութեան » բնագրին ։ Նոցա կրկին անգամ² (յամն 1843 և 1865) խորենացույ միւս երկստիւթեանց լիակատար ժողովածոյին մէջ ի լոյս բնծայած նա և « Հայոց Պատմութեան » հրատարակութիւնն, մինչև այս օրս ամենէն ընտրելագոյն հրատարակութիւնն է ։

Մխիթարեաններու հետոց հետեւեցան նա և ոմանք ի գաղղիացի հայագիտաց — Սէն Մարտին, Փլուրիւալ, Դիւրբիէ, Լանգուա, և այլն, և մանաւանդ առաջինն՝ որ մեծ աշխատութիւն, գիտութիւն և սրամտութիւն ի գործ դրած է խորենացույն՝ պատմութիւնը արգարացնելու համար ։ Դիւրբիէ Հանաց հերքել կատրմերի կարծիքը, վերածելով³ իւր եզրակացութիւնը հետեւեալ առաջարկութեանց, որ և են ցարկ, գրեթէ կէս դար ժամանակ, Մխիթարեանց³ ընդունած իրբեւ միակ հնարաւոր որոշումն Մար—Աբասեան խնդրոյն ։

ա. Մ. խորենացին, իւր արգարատիւթեամբն, չէր կարող վստահաբար գրել զայն, որ ինչ ինքն չէր գիտէր, կամ որ ինչ իրեն անճիշտ կը թուէր ։

բ. Եթէ այն ժամանակ (յի դարու նախ ք. դր.) այլ եւս Նիսուէ քաղաքն չկայր, բայց նիսուէական գիւանն կամ մասեւնալ, զարանն տակաւին կը մնար, փոխադրուած յիշկատան, ուր և կարող էր Մար—Աբաս գտնել հայկական տարեգրիքը ։

գ. Մար—Աբաս անունն մարթ էր ի գործածութեան լինէր՝ նա և նախաբրիտո-

1. Տես ի մասնաւորի նորա հետազոտութիւն « Fragments d'une Histoire des Arsacides », որ սուգադրուած է (սուղի ըսելով ըստ անհոգութեամբ խօսելով նոյ բնագրին մասին) յետ մահու անգլիական († 1832), յամի 1830, ի Պարիս, խմբագրութեամբ Փիլէս-Լուգրի ։

2. Journal Asiatique, 1852, N. 1.

3. Հմտ. Հ. Զարեան-Վարդի, Պատմ. հայկ. մասնաւորք. Մասն Ա, հրատ. Բ, Վենետիկ, 1886, յէջ 135-180 ։


սեան թուականին մէջ, ինչպէս այդ կը տեսնուի նոյն նոյն իսկ խորենացոյ պատմութենէ, յորում կը յիշուի Մար—իհնաք իւրան մի, զիսպան ֆրիստոսի ժամանակակից Աբգար թագաւորի :

Գ. Հայկ նահապետին և այլ հայ իշխանաց և թագաւորաց նկատմամբ զրած պատմութիւնները, կարող էր առնուլ խորենացին ժողովրդական աւանդութենէ, որ և սա չհրքէր Մար—Աբասեան Պատմութեան զոլութիւնը :

Ե. Հուսկ, խորենացին չէր կրնար զինքնուր Մար—Աբասայ հետ շփոթել :

Այս եղրակացութիւնը հազիւ թէ կարող էին տարակուսի տակ ձգել նախորդ քննա-

դատին յառաջ բերած փաստերը : Իսկ զայնով Մար—իհնաք անուան, զոր մէջ կը բերէ իբրեւ սպացոյց զոլութեան « Մար » տիտղոսին, արդէն նորագոյն հետազոտութիւնք սպացուցած են, որ բուն իսկ աղբիւրն, յորմէ կը հանէր Մովսէս իւր տեղեկութիւնքը՝ Աբգար թագաւորին և նորա ֆրիստոսի հետ ունեցած յարաբերութեանց մասին, այն իսկ Գ — ԴՐԷԷ զարու մէջ յօրինուած անհարազատ շարադրութիւն մ'էր. նա էր՝ Լարուքնայի ընծայուած « Աբգարու առասպելն » : Այսպէս հմտացիր ի *Lipsius*, « Die Edessene Abgarsage » և այլ հետազոտութիւնք նոյն նիւթին վրայ հրատարակուած : Եւրառնակեղի



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(Տես յ'էջ 500)



ԱՐԱՆ երեսունհինգ տարի անցնելէն ետքը՝ Սարգիս Ծատուր Աղաւաղեան նոր տպարան մը հաստատելով ի Մարտա « ցանկայր, կ'ըսէ յիշատակարան մը գրոց, իսկ ամենայն յօժարութեամբ սրտի, հանգերձ ծախիւք խրովք, զի յիւրում տպարանի տպագրեցոյն ամենայն նորատիպ մատենանք առ ի հոգեւոր վայելումն ամենայն հայկազեանս տոհմի » : Եւ այն ատեն զեռ կենպանի էր յիշեալ Յարութիւն Ծմաւօնեան, քահանայ Մատրասի եկեղեցւոյն, որ ունէր քովը ճաշակեցեք կամ Սրբազնագործութեան կոչեցեալ գրչոյի մը, « ժողովեալ ի գրոց աստուածայնոց և ի լուսաւոր բանից սուրբ վարդապետաց, աշխատութեամբ Նոր Զուգայտ Ս. Ամենափրկչի զերահուակ վանից միարան՝ Յովհաննէս մեծ

իմաստ հոգեւորի և բանիբուն աստուածաբան վարդապետի » : Տեսնելով Աղաւաղեանի առաջարկութիւնը, Ծմաւօնեան ներկայացաւ իրեն այս գրչով. « տեսեալ, կ'ըսէ, զամենաբարի փափաք սոյն ազնուատոհմ պարոնիս, փութացայ յառաջ մատուցանել զսոյն մատենան առ ի լոյս ընծայել տպագրութեամբ : Եւ սոյն ազնուազարմ պարոնս ամենայն յօժարակամ կամօք ընկալեալ՝ փութովին ետ տպագրել զայս քաղցրանշակ մատենան » :

1810ին եղած է հոն Ծնորհալի Հայրապետն Ելեւսիոյ ողբոց առաջին տպագրութիւնն, « արդեամբ և ծախիւք, — ինչպէս կը նշանակուի ի ձախտուն, պարոն Սարգիս Ծատուր Աղաւաղեանց կոչեցեալոյն, և ի նորին տպարանի որ ի Մարտա » : Եւ առաջաբանին